| | |
|---|---|
| ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ | ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ |
| ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ | ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ |
| 2024 թվականի փետրվարի 09-ի N 01-Ն | 2024 թվականի հունվարի 30-ի N 94-Ն |

# ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

## ՓՈՍՏԱՅԻՆ ԵՎ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԱՅԻՆ ԿԱՊԻ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻՆ ԵՎ ՄԵՔԵՆԱՅԱՑՄԱՆ, ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱՅՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Փոստային կապի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասը՝

Հրամայում ենք՝

1. Սահմանել փոստային և սուրհանդակային կապի օպերատորների տեխնոլոգիական սարքավորումներին և մեքենայացման, ավտոմատացման և տեղեկատվայնացման միջոցներին մաքսային մարմնի համար հասանելիության ձևաչափը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն հրամանի 3-րդ կետի:

3. Սույն հրամանի հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետն ուժի մեջ է մտնում «Փոստային կապի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» 2023 թվականի հոկտեմբերի 3-ի ՀՕ-304-Ն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված անցումային դրույթով սահմանված ժամկետի ավարտի օրն ընդգրկող ամսվան հաջորդող 7-րդ ամսվա 1-ից:

| | |
|---|---|
| ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ | ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ |
| ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ | ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ |

Հավելված

Հայաստանի Հանրապետության բարձր

տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի

«09» փետրվարի 2024թ. N 01 -Ն և

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների

կոմիտեի նախագահի «30» հունվար 2024թ. N 94 -Ն

համատեղ հրամանի

# ՓՈՍՏԱՅԻՆ ԵՎ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԱՅԻՆ ԿԱՊԻ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻՆ ԵՎ ՄԵՔԵՆԱՅԱՑՄԱՆ, ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱՅՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՉԱՓԸ

1. Սույն հավելվածով կարգավորվում են փոստային և սուրհանդակային կապի օպերատորների (այսուհետ՝ օպերատոր) կողմից ծառայությունների մատուցման ժամանակ (բացառությամբ ներհանրապետական փոստային կապի ծառայությունների, ինչպես նաև բացառությամբ 1993 թվականի դեկտեմբերի 23-ին ԱՊՀ անդամ պետությունների կողմից ստորագրված՝ «Հատուկ կապի առաքումների միջպետական փոխանակման մասին» համաձայնագրի շրջանակներում իրականացվող փոխադրումների) տեղեկությունների փոխանակմանն առնչվող՝ օպերատորների տեխնոլոգիական սարքավորումներին և մեքենայացման, ավտոմատացման և տեղեկատվայնացման միջոցներին (այսուհետ՝ համակարգեր) մաքսային մարմնի համար հասանելիության ապահովման հետ կապված հարաբերությունները:

2. Օպերատորներն իրենց համակարգերին մաքսային մարմնի համար հասանելիությունն ապահովում են հետևյալ ձևաչափերով՝

1) օպերատորների կողմից կիրառվող համակարգերից «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» (trade.gov.am) հարթակի միջոցով մաքսային մարմնին կիրառական ծրագրային ինտերֆեյսի (API) կիրառմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված տվյալների տրամադրմամբ.

2) մինչև սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված ձևաչափի գործարկումը՝ օպերատորների կողմից կիրառվող համակարգերից մաքսային մարմնի հարցմամբ համապատասխան տվյալների տրամադրմամբ:

3. Սույն հավելվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ձևաչափով մաքսային մարմնի համար հասանելիության տրամադրման դեպքում օպերատորներն ապահովում են իրենց կողմից կիրառվող համակարգերից հարցման արդյունքում մաքսային մարմնի կողմից հայցվող տեղեկությունների տրամադրումը:

4. Սույն հավելվածի 3-րդ կետով նախատեսված հարցումն իրականացվում է էլեկտրոնային եղանակով՝ մաքսային մարմինների կողմից իրականացվող մաքսային հսկողության շրջանակներում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված տվյալների ստացման նպատակով:

5. Սույն հավելվածի 3-րդ կետին համապատասխան կատարված հարցման արդյունքները օպերատորները տրամադրում են հարցումը ստանալուց հետո 1 օրվա ընթացքում՝ էլեկտրոնային եղանակով: